ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (կանոնակարգերը, բարոյական սկզբունքները և սովորույթները)

Հասմիկ Հմայակյան

Հայ ժողովուրդը հնագույն ժամանակներում ունեցել է հասակային դասեր, երիտասարդական կազմավորումներ, կտրիճավորաց եղբայրություններ, որոնք նպատակ են ունեցել հասարակությանը տալ լիարժեք, առողջ, խիզախ, խելոք սերունդ[1]:

Այդ կազմավորումները հայ իրականության մեջ հնագույն ժամանակաշրջաններում կոչվել են «Թուխ Մանուկներ»: Երիտասարդական այս կազմակերպությունները ոչ միայն իրենց ժամանակի մշակույթի հիմնական կենտրոններն են հանդիսացել, այլև հաճախ եղել են հեղաշրջումների և հասարակական շարժումների խթանիչ ուժերը[2]:

«Թուխ Մանուկների» ինստիտուտը, ամենայն հավանականությամբ, հիմք է հանդիսացել միջնադարյան Հայաստանում տարածված արհեստակցական միությունների՝ համքարությունների ստեղծման համար, որոնք կոչվում էին «Եղբարց միաբանություն» կամ «Կտրիճավորաց եղբայրություններ»:

Համքարությունների առաջացումը պայմանավորված էր քաղաքային առևտրի և արհեստների զարգացմամբ: Եվրոպայում՝ Բյուզանդիայում և Իտալիայի քաղաքներում, արհեստակցական կազմակերպությունների առաջացումը թվագրվում է 9-րդ դարով: Իրանում և Մերձավոր Արևելքում այդ գործընթացը սկսվել է ավելի վաղ, քան Արևմտյան Եվրոպայում: Հայ իրականության մեջ «Եղբարց միաբանություն» կոչված քաղաքային միությունները հին ակունքներ ունեն, և նման եղբայրության մասին հնագույն վկայությունը կարելի է համարել Մատթեոս Ուռհայեցու մոտ վկայված՝ Վանից Անտիոք ժամանած Մանկտավագների մասին հիշատակությունը,

[1] *Մնացականյան Ա.Շ.,* «Թուխ Մանուկ» հուշարձանների մասին «Թուխ Մանուկ» ժողովածու, Երևան, 2001, էջ 108:

[2] Նույն տեղում, էջ 96-97:

որը վերաբերում է 1120թ.[1]: Սակայն միջնադարյան Հայաստանում ստեղծված եղբայրությունների մասին եզակի սկզբնաղբյուր է 1280թ. Երզնկայում կազմավորված եղբայրության կանոնադրությունը՝ գրված Հովհաննես Երզնկացու (մահ. 1293թ.) կողմից, որում արտացոլված են «Եղբայրության» ներքին հարաբերություններին վերաբերող մի շարք կանոններ (այս փաստաթուղթը հրատարակել է Լ.Խաչիկյանը, տե՛ս *Հավելված 2):* Հայկական քաղաքների եղբայրություններն ընդհանրություններ ունեն փոքրասիական քաղաքներում 13-րդ դարում առաջացած «Ախի» եղբայրություն կոչվող կազմավորումների հետ: «Ախի»-ների ինստիտուտն ուսումնասիրել է Ա.Խաչատրյանը[2]: Ըստ նրա, «Ախիներ» առևտրա-արհեստակցական կազմակերպությունները պատմական Հայաստանի տարածքում և Փոքր Ասիայում կապված են Մերձավոր Արևելքում ավելի վաղ ստեղծված սոցիալ-գաղափարախոսական կամ հոգևոր-ասպետական ֆուտուվվա կամ մուռուվվա ինստիտուտներին: Այն իր արմատներով, ամենայն հավանականությամբ, հանգում է վաղարաբական ասպետականությանը, որը ներառում էր երիտասարդ տղամարդկանց, որոնք բարեգործ էին, մեծահոգի, շռայլ և համարձակ: Վաղարաբական ասպետականության գաղափարները վերցվեցին Մերձավոր Արևելքի երիտասարդ տղամարդկանց առևտրա-արհեստագործական միությունների կողմից և դարձան նրանց գաղափարախոսության հիմքը:

1280թ. Երզնկայում ստեղծված եղբայրության մեջ միավորվել են քաղաքի առևտրական և արհեստավորական խավերին պատկանող չամուսնացած երիտասարդները: Նրանց նպատակն էր միացյալ ուժերով դիմագրավել բռնակալներին, օգնել տնտեսապես քայքայված ընկերոջը, աջակցել միմյանց: Նման եղբայրություններ, ամենայն հավանականությամբ, գոյություն են ունեցել Կարին, Անի և Վան քաղաքներում[3]:

Երզնկայի եղբայրության անդամները հարևան ժողովուրդների հետ խաղաղ համագոյակցության կողմնակից էին: Օտար երկրներում քարավաններով շրջագայելիս եղբայրության զենքին տիրապետող անդամները՝ «մանկտիք», պաշտպանում էին իրենց գույքը թշնամուց, մասնակցում էին նաև հայրենի քաղաքի պաշտպանությանը: Ստորև ներկայացնում ենք մի շարք կարևորագույն դրույթներ այդ կանոնադրությունից.

- Սիրեցեք Արարիչ Աստծուն և հանուն նրա սիրո արհամարհեք այլ սերերն աշխարհի:
- Պատվեք ձեր ծնողներին և ծերության ժամանակ խնամեք նրանց:

[1] *Մատթեոս Ուռհայեցի,* Ժամանակագրություն, Երևան, 1973, էջ 148:

[2] *Хачатрян А.,* Трехъязычная надпись из Елегиса, Кавказ и Византия , Ереван, 1982, N3.

[3] Տե՛ս *Խաչիկյան Լ.,* Երզնկայում 1280թ. կազմակերպված «եղբայրությունը», Տեղեկագիր հաս. գիտ, 1951, N12, էջ 80-82:

- Պատվեք ձեր քահանային, որը ձեր հոգևոր ծնողն է:
- Զերծ պահեք ձեզ մեղքերից և մնացեք անարատ (կույս) մինչև ամուսնությունը:
- Մի՛ շնացեք ամուսնությունից հետո:
- Հայհոյելուց զերծ պահեք ձեր բերանները:
- Ձեր բանտարկված եղբորը նեցուկ կանգնեք:
- Եթե եղբայրներից մեկը մեղք գործի, մյուս եղբայրները պետք է աղոթեն և խրատներով դարձի բերեն նրան:
- Եթե եղբայրության անդամներից մեկը աղքատության մեջ է ընկնում, եղբայրները պարտավոր են նեցուկ կանգնել նրան և օգնել:
- Եթե եղբայրներից մեկը հիվանդանում է, ապա բոլորը պետք է այցելեն և քաջալերեն նրան, որ առողջանա:
- Եթե եղբայրներից մեկը մահանա, բոլոր եղբայրները պետք է նրա մարմինը տանեն գերեզման և հողին հանձնեն:

Նրանք պետք է խաղաղասեր լինեն բոլոր մարդկանց նկատմամբ և այլ ազգերի իմաստուններին մեծարեն ու օգտվեն նրանց իմաստությունից: Ավագ եղբայրները պետք է սիրով խրատեն, իսկ կրտսերները՝ հնազանդությամբ լսեն:

Արհեստակցական միությունները հետագա դարերում ստեղծվում են պատմական Հայաստանի մի շարք մեծ քաղաքներում, որոնց ներքին կարգի, կանոնադրության մասին պահպանվել են մի քանի փաստաթղթեր, որոնցից մեկն էլ XVIIIդ. ձեռագիրն է[1], որ կոչվում է «Յաղագս Արհեստաւորաց» և բաղկացած է 48 կետերից (տե՛ս *Հավելված 3):* Այս կանոնագիրքն արժեքավոր է նաև այն տեսակետից, որ վերաբերում է բոլոր արհեստներին պատկանող արհեստավորներին: Ձեռագրում հիշատակվում է, որ այս կանոնները Հեթում թագավորի (XIII դար) ժամանակներից են հասել: Սրանով հաստատվում է համքարության կանոնագրերի հնագույն լինելը[2]:

Այս կանոնադրությունը մեծ ընդհանրություններ ունի Երզնկայի կանոնադրության հետ, սակայն, ի տարբերություն նախորդի, այստեղ արտացոլվել է նաև ենթավարպետների ու աշակերտների փոխհարաբերությունների ու նրանց պարտավորությունների հարցը:

Ուշագրավ է, որ մինչև XVIIդ., նաև ավելի ուշ շրջանում՝ XVIII-XIXդդ., գործածական էր «եղբայրություն» անվանումը, որը համընկնում էր համքարությանը: Հայտնի է, որ XVIII-XIXդդ. արհեստակցական կազմակերպություններն Արևելյան Հայաստանում կոչվել են «Համքարություններ», իսկ

[1] Մատենադարանի N448 ձեռագիր, էջ 249-262:
[2] *Աբրահամյան Վ.,* Արհեստները Հայաստանում, Երևան, 1956, էջ 244:

Արևմտյան Հայաստանում՝ «Էսնաֆություններ»:

Ներկայացնենք մի շարք կետեր, դրույթներ թե՛ այս, թե՛ այլ փաստաթղթերից:

Յուրաքանչյուր արհեստավոր պարտավոր էր ինքը հմտանալ իր արհեստի մեջ և հետո կիրառել այն: Ինչպես հոգևորականները պարտավոր էին երդվել արդար կառավարել, այնպես էլ արհեստավորների «ուստաբաշին» պետք է այդպես կառավարեր:

Հետաքրքիր են բժիշկների վերաբերյալ կետերը: Եթե դեղավաճառը սխալ դեղ է վաճառում, որի արդյունքում հիվանդի վիճակը վատթարանում է, կամ նա մահանում է, ապա դեղավաճառը պետք է դատվի: Բժիշկները պետք է հմուտ լինեն իրենց արհեստում և օգնեն հիվանդներին դեղերով և այլ միջոցներով:

Եթե որևէ մեկը գինեմոլությամբ, շնանալու պատճառով վատնի իր կարողությունը, նա պետք է պատժվի օրենքով:

Եթե քարամշակ վարպետը որևէ մեկից թանկարժեք քար է վերցնում և մշակելիս վնասում այն, կամ ըստ պատվիրատուի պահանջի չի մշակում, ապա նա պարտավոր է փոխհատուցել պատվիրատուի վնասը:

Եթե ոսկերիչը որևէ մեկից արծաթ կամ ոսկի վերցնի և գողանա ոսկուց կամ արծաթից, կամ խառնի պղինձ ու այլ նյութեր, ապա նրան պետք է դատապարտել ըստ օրենքի:

Եթե որևիցե մեկը բռնությամբ տիրանում է ուրիշի դաշտին կամ հողին, ոչ միայն իր տված վնասի դիմաց պետք է վճարի քառակի, այլև իր հանդգնության համար հրապարակավ պատիժ պետք է կրի:

Ըստ այս կանոնադրության՝ արհեստակիցների միջև շատ ուժեղ են եղել փոխադարձաբար միմյանց օգնելու պարտավորությունները: Կան հատուկ կետեր իրար հարգելու, խաղաղասեր լինելու մասին: Ընտրված ղեկավարները պետք է երդվեն Ավետարանի վրա:

Համքարական հարկը, տուգանքները, եկեղեցիների շինարարական ծախսերը, հիվանդներին բուժելը, հաշմանդամներին օգնելը, նույնիսկ համքարության անդամի թաղման ծախսերը կատարվում էին ընդհանուր գանձարանից:

Համքարության անդամները խիստ պատիժների էին ենթարկվում գողության և կեղծարարության դեպքում: Պատժի կամ դրամական տուգանքի էին ենթարկվում նաև այն դեպքում, երբ հայհոյում կամ կռվում էին հարբած վիճակում: Պատժվում էին նաև նրանք, ովքեր անհարկի պատճառով չէին մասնակցում իրենց արհեստակցի հուղարկավորությանը:

Հետագա դարերում արհեստակցական միությունները բուռն զարգացում են ապրում Հայաստանի տարբեր քաղաքներում, օրինակ՝ Երևանում,

Գյումրիում, Կարսում, Կարինում[1]:

19-րդ դարի առաջին տասնամյակում Երևանում 2349 արհեստավորներ ներգրավված էին 69 արհեստներում: Արհեստակցական միությունները Երևանում զբաղեցնում էին քաղաքների առանձին թաղամասերը: Օրինակ, Դամուրբուլաղ թաղը շիլաչիներինն էր (կարմիր ներկով ներկողների թաղամաս): Կաշեգործներինը Զորագյուղում էր (Հրազդանի ափին): Այս կաշեգործական արհեստանոցները տարբեր վայրերից, անգամ Մակուից և Բայազետից բերում էին անմշակ կաշի և մշակում: Երևանի արհեստավորներն աչքի էին ընկնում բարձր վարպետությամբ և բարեխղճությամբ:

Երևանում մեծ զարգացում ուներ նաև ջուլհակությունը:

Որպես արհեստակցական խոշոր կենտրոն՝ աչքի էր ընկնում նաև Գյումրին, որտեղ արհեստների որոշ ճյուղեր ավելի բարձր զարգացման էին հասել, քան Երևանում: Այստեղ 19-րդ դարի երկրորդ կեսին հաշվվում էր արհեստների 96 տեսակ՝ ավելի շատ, քան Երևանում:

Նախիջևան, Օրդուբադ և Նոր Բայազետ քաղաքները ևս ունեցել են համքարություններ:

Առևտրա-արհեստակցական հնագույն կենտրոններից է եղել նաև Ախալցխան. 1830-ականներից սկսած, միջնադարյան Հայաստանի կարևորագույն կենտրոն Կարինից այստեղ գաղթած բնակչությունն առավել զարգացրեց արհեստները: Այստեղ զարգացած արհեստներից էին թամբագործությունը, մետաքսագործությունը, ոսկերչությունը, զինագործությունը, դերձակությունը և այլն: Կարսը ևս համքարություններ ուներ, որոնց սովորույթները, կանոնակարգերը և իրավունքները նման են եղել Կարինի, Ախալցխայի, Գյումրիի էսնաֆություններին:

Անդրադառնանք նաև այս արհեստակցական միությունների կանոնակարգերին ու սովորույթներին: Պետք է նշել, որ 18-րդ դարի «Յաղագս արհեստաւորաց», ինչպես նաև 19-րդ դարի առաջին կեսից մեզ հասած «Կանոն ոսկերիչ արհեստաւորաց» և 19-րդ դարի Կարինի դարբինների ու Ախալցխայի կոշկակարների կանոնակարգերը նույնանման կետեր ունեն ավելի վաղ ստեղծված Երզնկայի «եղբայրության» կանոնադրության հետ, ինչն էլ կարող է վկայել այդ կանոնակարգերի հիմնական դրույթների ժառանգաբար փոխանցման մասին:

Հայաստանում համքարության կազմի մեջ կարող էին ընդգրկվել բոլոր արհեստավորները՝ առանց կրոնական և ազգային խտրականության:

Համքարության անդամներ էին դառնում ոչ միայն վարպետները կամ ենթավարպետները, այլ նաև նրանց ընտանիքի անդամները: Յուրաքանչյուր վարպետ պարտավոր էր ազնիվ աշխատանքով և մասնագիտական

[1] Տե՛ս *Աբրահամյան Վ.,* Հայ համքարությունները Անդրկովկասի քաղաքներում, Երևան, 1971:

վարպետությամբ բարձրացնել համքարության հեղինակությունը: Վարպետն իրավունք չուներ այլ վարպետի աշակերտին ընդունել իր մոտ: Աշակերտներն ընդունվում էին երդմամբ, որը տեղի էր ունենում վարպետի ու աշակերտի կամ նրա խնամակալի միջև: Վարպետի ու աշակերտի փոխհարաբերությունները շատ ջերմ էին՝ հոր և որդու նման: Աշակերտը վարպետ էր ձեռնադրվում համքարության բոլոր անդամների ներկայությամբ: Այդ հավաքը տեղի էր ունենում որևէ բացօթյա վայրում: Օրինակ՝ Գյումրիում աշակերտի երդման արարողությունը կատարվում էր վերոհիշյալ Թուխ Մանուկ հուշարձաններում[1], որին մասնակցում էին նաև հոգևորականներ: Վերջիններս օրհնում էին աշակերտին և բարոյական խրատներ տալիս, իսկ նա համբուրում էր վարպետի ձեռքը: Այնուհետև ներկաները հրավիրվում էին ճաշի: Աշակերտը որոշակի սահմանված չափով գումար էր նվիրում համքարության գանձարանին: Համքարության մեջ ընդունվում էին միայն լավ համբավ ունեցողները: Օրինակ՝ Էրզրումի համքարության կանոնադրության մեջ գրված է, որ համքարություն չեն ընդունում կեղծարարներին, խաբեբաներին, անբարոյականներին, թեկուզ նրանք լավ տիրապետեն իրենց արհեստին[2]:

Յուրաքանչյուր համքարություն ուներ իր վարչությունը, դատարանը, որում մեծ դեր էր կատարում գլխավոր վարպետը (ուստաբաշի), և ավագներից բաղկացած ընդհանուր խորհուրդը, որոնք բոլորն էլ ենթարկվում էին քաղաքի իշխանությանը: Արհեստավորների ժողովն ընտրում էր արհեստապետ (ուստաբաշի) և երեք խորհրդականներ, որոնք քահանայի ներկայությամբ, Ավետարանի և խաչի վրա երդվում են հավատարիմ լինել իրենց գործին:

Ուստաբաշին պատասխանատու էր համքարության արտադրության որակի, չարաշահումների և կեղծարարությունների համար: Նա էր գրանցում նոր անդամներին, հավաքում և բաշխում հարկերը, հաստատում աշակերտի ընդունման և ազատման պայմանագիրը, քննարկում վեճերը, հսկում համքարության գանձարանը, օգնություն տրամադրում համքարության հիվանդ և աղքատ անդամներին: Համքարություններն ունեին իրենց դատարանը, որտեղ քննվում էին վարպետի, ենթավարպետի և աշակերտի միջև ծագած, անգամ ընտանեկան վեճերը: Կրոնական պարտավորությունների խախտման վերաբերյալ հարցերը քննարկվում էին նաև համքարության անդամների դեմ եղող բողոքները, պատվերները վատ կատարելու, անորակ ապրանք վաճառելու գործերը, կեղծարարությունները: Այս խախ-

[1] *Քալանթարյան Ա., Սարգսյան Հ.,* «Թուխ Մանուկ» հուշարձանների հարցի շուրջ, «Թուխ Մանուկ» նստաշրջանի նյութեր, Երևան, 2001, էջ 86:
[2] Նույն տեղում, էջ 114:

տումների համար սահմանված էին տարբեր պատիժներ: Խարդախությունների համար առաջին անգամ սահմանափակվում էին հանդիմանությամբ կամ տուգանքով, սակայն վարպետի համար ծանրագույն պատիժ էր համարվում հրապարակավ անպատվությունը. նրա անորակ գործը կախում էին խանութի պատից՝ ի ցույց ամենքի: Ամենադաժան պատիժը, որը կիրառվում էր անբարո վարքի կամ խիստ խարդախությունների դեպքում, քաղաքից աքսորումն էր: Համքարության դատարանը քննում էր նաև պատվիրատուների գանգատները, և եթե նրանք արդարացի էին, ապա պատժվում էին վարպետները, կամ փոխհատուցվում էր պատճառված վնասը: Ինչպես տեսանք, համքարությունները մեծ ուշադրություն էին դարձնում արտադրանքի որակին և համքարության անդամի բարեխիղճ աշխատանքին: Հատուկ ուշադրություն էր դարձվում նաև համքարության անդամի բարոյական նկարագրին. հաշվի էին առնվում անգամ նրա արտաքին պահվածքը, տեսքը, վարվեցողությունը: Համքարության անդամները օգնում էին ոչ միայն իրենց աղքատացած արհեստակցին, այլև մահացած արհեստակցի երեխաներին ու այրուն: Համքարությունները նաև զանազան հասարակական բարեգործություններ են կատարել: Օրինակ՝ Գյումրիի համքարությունների նախաձեռնությամբ 1860թ. հիմնվել է աղքատանոց[1], որը որպես ծերանոց գործում էր խորհրդային ժամանակներում: Համքարության անդամները մասնակցել են նաև Գյումրիի Սբ Փրկիչ եկեղեցու կառուցմանը 1869-1876թթ.:

Այժմ ներկայացնենք համքարությունների ներսում առկա որոշ սովորույթներ և ծիսական ավանդույթներ: Օրինակ՝ հայտնի է, որ միջնադարյան հայկական արհեստավորական միությունների երիտասարդներն ազատ ժամանակ հավաքվում էին խնջույքների, որտեղ զվարճանում էին, գինի խմում, ունկնդրում իրենց սիրելի բանաստեղծների և գուսանների հնարած սիրո երգերը և զվարճանում էին վարձակների պարերը դիտելով: Հայրենների մի զգալի մասը ևս հնարված է քաղաքաբնակ ամուրի երիտասարդների պատվերով[2]:

Միջնադարյան համքարությունները (արհեստակցական միությունները) պարտավոր էին տոն օրերին (Ծննդին և Զատկին) փակել խանութները: Համքարությունները տարվա մեջ ունեին իրենց մատաղի օրերը, որոնք նվիրված էին իրենց արհեստի նախահորը:

Մատաղի օրը համքարության անդամները մատաղից մի մեծ կաթսա շիլա էին եփում, տանում եկեղեցի, օրհնել տալիս և բաժանում աղքատնե-

[1] Նույն տեղում, էջ 132:

[2] *Խաչիկյան Լ.,* Երզնկա քաղաքի «Եղբարց միաբանութեան» կանոնադրությունը (1280), Բանբեր Մատենադարանի, N6, Երևան, 1962:

րին: Բարեկենդանի հինգշաբթի օրը ենթավարպետը կամ աշակերտը նվերով շնորհավորում էր վարպետի տոնը:

Ամեն մի համքարություն իր նախահոր պատվին պարտավոր էր մի մատուռ կառուցել կամ մի որևէ եկեղեցում պահել մի կանթեղ, որը պետք է միշտ վառ մնար:

Արհեստավորները մեծ նշանակություն էին տալիս իրենց դազգահներին և միշտ երդվում էին նրանով: Շաբաթ օրերը, երեկոյան, մոմ էին վառում և խունկ ծխում դազգահի վրա ու «ողորմի»-ով հիշում «Տիրաց-Վարպետաց» հոգին[1]:

Ամեն մի համքարություն պաշտում էր իր արհեստի նախահորը: Օրինակ՝ բրուտների նախահայրը հայր Աստվածն էր, երկաթագործներինը՝ Դավիթ մարգարեն, հացթուխներինը՝ Քրիստոսը: Թամբագործների նախահայրը Սուրբ Սարգիսն էր, քանզի նա, ըստ ավանդության, պատրաստել է թամբ, դրել ձիու վրա և փախցրել աղջկան: Գինեգործների նախահայրը եղել է Նոյը: Սուրբ Գևորգը եղել է հյուսների նախահայրը, ինչպես նաև Հովսեփը:

Ամփոփելով նշենք, որ վերոհիշյալ փաստերը և նյութերը ցույց են տալիս, թե ինչպիսի խստապահանջ, բարձր բարոյական և մարդկային արժեքների կրող են եղել մեր միջնադարյան և հետագա արհեստակցական կազմակերպությունները: Դրանք, ինչպես տեսանք, հանգում են դեռևս վաղնջական ժամանակներում մեր ժողովրդի մեջ ստեղծված Թուխ Մանուկների երիտասարդական կազմավորումներին: Եվ զարմանալին այն է, որ մեր ժողովրդի պատմության հնագույն շրջանում ձևավորված այդ բարոյական արժեհամակարգերը չեն կորցրել իրենց հնչեղությունը, թվում են շատ արդիական և կիրառելի են այսօր:

[1] *Աբրահամյան Վ.Ա.,* Հայ համքարությունները Անդրկովկասի քաղաքներում, Երևան, 1971, էջ 134: